Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցուպատմություն» առարկայի
հանրապետական փուլ
8-րդ դասարան

N 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1.Ո՞վ օգնեց Հիսուսին՝ խաչափայտը բարձարացնել Գողգոթա. **(0,5 միավոր)**
1) Հովսեփը
2) Սիմոն Կյուրենացին
3) Հովհաննեսը
4) Պետրոսը

2.Հարությունից հետո քանի՞ օր Հիսուս Քրիստոս շրջեց երկրի վրա. **(0,5 միավոր)**
1) 20
2) 30
3) 40
4) 50

3.Բառացի ի՞նչ է նշանակում եպիսկոպոս. **(0,5 միավոր)**
1) Վերատեսուչ
2) Առաջնորդ
3) Վերակացու
4) Հովիվ

4. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Ընտանիքը մի փոքրիկ թագավորություն է, ուր հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են այն». **(0,5 միավոր)**
1) Հովհաննես Թումանյան
2) Պողոս առաքյալ
3) Հովհաննես Ավետարանիչ
4) Խրիմյան Հայրիկ

5.Ներսես Մեծի օրոք ինչե՞ր բացվեցին՝ եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու համար.
1) Վանքեր **(0,5 միավոր)**
2) Ճգնարաններ
3) Գրադարաններ
4) Դպրոցներ

6.Ո՞ր տիեզերական ժողովում է սահմանվել «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը.
1) Կոստանդնուպոլսի **(0,5 միավոր)**
2) Նիկեայի
3) Քաղկեդոնի
4) Եփեսոսի

7.Ո՞ր կաթողիկոսն է բանտարկվել Դվինում՝ Յուսուֆի կողմից. **(0,5 միավոր)**

1) Անանիա Ա Մոկացի
2) Հովհաննես Ե Դրասխանակերտցի
3) Մովսես Ե Եղիվարդեցի
4) Գևորգ Բ Գառնեցի

8. Զաքարե ամիրսպասալարին ո՞վ է ուղարկում պատարագի համար նախատեսված շարժական սեղան. **(0,5 միավոր)**

1) Հովհաննես Զ կաթողիկոսը
2) Լևոն II թագավորը
3) Մանուել կայսրը
4) Դավիթ Քոբայրեցին

N9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Երբ Հերովդեսը մահացավ, հրեշտակը կրկին հայտնվեց _____ ին և պատվիրեց վերադառնալ հայրենիք: **(1 միավոր)**

10. Հայոց եկեղեցում տնօրինեքի կարգ սահմանված է կատարել Ս. Ծննդյան և _____ տոներից հետո: **(1միավոր)**

11. Տրդատ III թագավորի սուրը, որը ստացել էր Կոստանդիանոս կայսրից, կոչվում էր «_____»: **(1միավոր)**

12. Հանուն Քրիստոսի՝ չարչարանքների ենթարկված, սուրբ հավատը վկայող մարդուն անվանում էին _____: **(1միավոր)**

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13.Հայրապետների անունները համապատասխանեցնել իրենց գահակալման տարեթվերին.

1. Սարգիս Ա Սևանցի	**ա.** 1058-1065 թթ.	**1**	
2. Պետրոս Ա Գետադարձ	**բ.** 1113-1166 թթ.	**2**	
3. Խաչիկ Բ Անեցի	**գ.** 1019-1058 թթ.	**3**	
4. Գրիգոր Գ Պահլավունի	**դ.** 992-1019 թթ.	**4**	
	ե. 898-929 թթ.		

(1միավոր)

14 .Նշված բառերը համապատասխանեցնել իրենց բացատրություններին.

1. Բաղարջ	**ա.** Մոլախոտ	**1**	
2. Որոմ	**բ.** Ապաստարան բորոտների համար	**2**	
3. Ծիրանի	**գ.** Ծերանոց	**3**	
4. Ուրկանոց	**դ.** Առանց թթխմորի պատարստված հաց	**4**	
	ե. Թագավորական հագուստ		

(1միավոր)

N15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Եկեղեցական ժողովները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Շահապիվանի
բ. Արտաշատի
գ. Շիրակավանի
դ. Շուղրի
ե. Դվինի առաջին

1	
2	
3	
4	
5	

(1միավոր)

16. Ժողովների որոշումները դասավորել՝ ըստ դրանց ընդունման ժամանակագրական հաջորդականության.

ա. Արգելվում էին բոլոր տեսակի հարաբերությունները պավլիկյանների հետ
բ. Գրիգոր Թ Մուսաբեկյանցը գահընկեց է հայտարարվում
գ. Մերժվում է նեստորականությունը
դ. Արգելվում է բազմակնությունը
ե. Մերժվում է Փոտ պատրիարքի առաջարկը

1	
2	
3	
4	
5	

(1միավոր)

N 17.

Աշխատանք սկզբնաղբյուրով (2միավոր)

17. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին.

Բայց… մյուս առավոտ, երբ որ դեռ քնած,
Հանգչում էր ամբոխն աղմուկից հոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա
Դարձյալ միայնակ վե՞ր դեպի Սինա:

1) Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:

_____

(1միավոր)

2) Ի՞նչ է բանաստեղծության վերնագիրը:

_____

(1միավոր)

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի,փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկված պնդումներից ո՞ր երկու տարբերակներն են ճիշտ.

1) Անապատում Հիսուս 50 օր ոչինչ չկերավ և քաղց զգաց:
2) Առաջին փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ Աստծուն փորձել չի կարելի:
3) Երրորդ փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ միայն Աստծուն պետք է երկրպագել:
4) Անապատում Հիսուս անընդհատ աղոթում էր և մտածում մարդկանց փրկության մասին:
5) Սատանայի՝ Հիսուսին մոլորեցնելու բոլոր չորս փորձերը ձախողվեցին:

(2 միավոր)

19. Թվարկված պնդումներից ո՞ր երկու տարբերակներն են ճիշտ.

1) Եկեղեցի բառը ծագել է հունարեն էկլեսիա բառից, որը նշանակում է հավատացյալների ժողով:
2) Եկեղեցին օծվում ու սրբագործվում է, և դրանից հետո միայն այնտեղ կարելի է արարողություն կատարել:
3) Եկեղեցիների առաջին մեծ բաժանումը տեղի ունեցավ 1054 թ.:
4) Ժամերգությունը եկեղեցական ծես է, որը տեղի է ունենում օրական մեկ անգամ:
5) Հայ Առաքելական եկեղեցու հիմնադիրը Սբ. Գրիգոր Լուսավորիչն է:

(2միավոր)

N 20

Շարադրանք

(2 միավոր)

Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Հայաստան. ներկայացրե՛ք նշանակությունը հայ ժողովրդի համար: